

# ՀՀ ԲԱՂԱԲԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ԵԼՈՒՅԹԸ ՇԻՆԱՐԱՐԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

6 օգոստոսի 2010թ, Երևան հյուրանոց

**Մեծարգո պարոն վարչապետ**

**Հարգելի շինարարներ**

**Տիկնայք եւ պարոնայք**

Ձերմոտեն շնորհավորում եմ շինարարի մասնագիտական տոնի առիթով, մաղթում եմ նորանոր հաջողություններ:

Հատուկ ուզում եմ նշել, որ մեր տոնացույցում շատ չեն մասնագիտական տոները, եւ այն, որ հայ շինարարը ունի իր սեփական տոնը, ինքնին խոսուն փաստ է: Շինարարի գործը Հայաստանում միշտ եղել է հարգանքի, ընդօրինակման արժանի եւ պատվաբեր մասնագիտություն, շինարարը ընկալվել է հասարակության պատվարժան ու օրինակելի անդամ: Այսօր հոբելյանական օր է, Շինարարի օրը Հայաստանում նշվում է արդեն հինգերորդ անգամ, եւ թերեւս արժե հետահայաց դիտել այդ տարիներին արվածը:

Եթե դիտարկենք Հայաստանի շինարարական ոլորտի վերջին 5 տարվա զարգացման դինամիկան, ապա պարզ կդառնա, որ մինչեւ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը մենք արձանագրել ենք բարձր աճ թե ծավալային, թե գումարային առումով: Դճնաժամը ծանր անդրադարձավ թե պետական սեկտորի, թե մասնավոր միջոցներով իրականացվող շինարարության վրա: Այսօր մենք ունենք բազմաթիվ անավարտ շինարարական օբյեկտներ, քիչ չեն այն ընկերությունները, որոնք ունենալով հանդերձ շինարարություն իրականացնելու թույլտվություն, չեն սկսում աշխատանքը հիմնականում միջոցներ չունենալու պատճառով:

Ես բարձր եմ գնահատում մեր կառավարության ջանքերը՝ հատկապես մեր ոլորտին աջակցելու հարցում: Հայաստանի կառավարությունը, նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարությամբ, գործուն միջոցներ ձեռնարկեց ոլորտի անկումը կասեցնելու եւ թեւ փոքր, բայց կայուն աճ ապահովելու ուղղությամբ: Եւ արդյունքը երկար սպասեցնել չտվեց. այսօր շինարարության ոլորտի վիճակը կայունացել է, նկատվում է դրական տեղաշարժ:

Մեր հաջողությունների թվում կուզենամ առանձնահատուկ շեշտել ադետի գոտում իրականացվող լայնածավալ բնակարանաշինության փաստը: Արդեն ասվեց, որ անցած ամիս Գյումրիում շահագործման հանձնեցինք Մուշ-2 բնակելի թաղամասը՝ 22 շենք, 1056 բնակարան: Ընթանում է եւս 37 շենքի շինարարություն, եւ ընդհանուր առմամբ մինչեւ 2013 թվականը կկառուցվի եւ անօթեւան ընտանիքներին անհատույց սեփականության կհանձնվի ավելի քան 215 հազար քառակուսի մետր բնակտարածք:

Հաջորդ ամսվա ընթացքում նախատեսում ենք Սպիտակ քաղաքում շահագործման հանձնել նոր թաղամաս, որն իր մեջ ներառում է 220 բնակելի առանձնատուն, յուրաքանչյուրը 400-600 մետր տնամերձ հողամասով:

Նշեմ, որ աշխատանքն ընթանում է համաձայն ժամանակացույցի, եւ ծրագիրը կավարտենք նախատեսված ժամկետում:

Մեր նախարարության մյուս գերակայությունը դպրոցաշինությունն է, եւ ուրախությամբ պետք է արձանագրեմ, որ այն դպրոցները, որոնց նորոգումը նախատեսվում էր ավարտին հասցնել այս ուսումնական տարվա սկզբին, սեպտեմբերի 1-ին կընդունեն իրենց աշակերտներին:

## Մեծարգո պարոն վարչապետ Հարգելի ներկաներ

Ես համոզված եմ, որ այսօրվա ժամանակավոր դժվարությունները ամենեւին չեն թուլացրել շինարարների ոգին: Շինարարներն աշխատավոր ժողովուրդ են, իսկ փոփոխված կամ բարդացած պայմաններին մենք հակադրելու ենք նոր մտածողություն, նոր մոտեցումներ, նոր լուծումներ:

Արդեն անցած տարի մենք ստեղծել ենք «Ճարտարապետների և շինարար-ճարտարագետների համահայկական ասոցիացիան», նպատակ ունենալով հայրենաշինության գործում ներգրավել նաև սփյուռքի ներուժը:

Ես կասկած չունեմ, որ ամենամոտ ապագայում մեր ոլորտը կրկին ծաղկում է ապրելու, և մեր շինարարները պատվով շարունակելու են իրենց շնորհակալ աշխատանքը:

Ես մեկ անգամ շնորհավորում եմ բոլոր շինարարներին մասնագիտական տոնի առիթով, մեր ընտանիքներին մաղթում եմ երջանկություն ու խաղաղ երկինք:

Շնորհակալություն: